ՀՏԴ 376

ԹՈՒՅԼ ՏԵՍՆՈՂ ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔԻ ԽԱՆԳԱՐՈՒՄՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ

Հ. Ռ. Մկրտչյան

«Մարի Իզմիրլյանի անվան մանկապուն» ՊՈԱԿ-ի տնօրեն, մանկավարժական գիտությունների թեկնածու, դոցենտ

Հանգուցային բառեր և արտահայտություններ. տեսողության խանգարում, թույլ տեսնող, գրավոր խոսքի խանգարումներ, խոսք, սխալներ, թելադրություն, հնչյունահնչութային սխալներ:

Թույլ տեսնող կրտսեր դպրոցականների գրավոր աշխատանքների (արտագրություն, թելադրություն, նկարի շուրջ շարադրություն) ուսումնասիրման և վերլուծության արդյունքում բացահայտել ենք հիմնական և առավել հաճախ հանդիպող այն սխալները, որոնց պատճառը խոսքի զարգացման շեղումներն են, և որոնք պայմանականորեն խմբավորված են ըստ հետևյալ տեսակների.

- տառերի հնչունա-հնչույթային փոխարինումներ և տեղաշարժեր
- տառերի ու վանկերի տեղափոխումներ և բացթողումներ
- ապաքերականացում
- բառի մասերի և բառերի միասին ու անջատ գրելաձև
- որոշ հոգեկան գործընթացների թերզարգացումով պայմանավորված սխալներ:

Խոսքի զարգացման շեղումներով պայմանավորված գրավոր խոսքի խանգարումների թվին մենք առաջնահերթ դասեցինք տառերի հնչյունահնչութային փոխարինումներն ու տեղաշարժերը: Լոգոպեդական հետազոտություններում դրանք մանրամասն ուսումնասիրել և հետազոտել են Ռ.Ե.Լևինան (1959-1971), Ս.Ս.Լյապիդևսկին (1963 1965), Ն.Ա. Նիկաշինան (1959-1968), Լ.Ֆ.Սպիրովան, Ա.Վ.Ցաստրեբովան (1957 1968), Մ.Կ.Բուռլակովան (2001), Ս.Գ. Կարապետյանը (2003) և այլք:

Տիֆլոմանկավարժության ոլորտում այդ հիմնախնդիրը բավարար չափով լուսաբանված չէ: Այդ սխալների միայն հնչյունային բնույթն է եղել խոր ուսումնասիրման առարկա [6, 9, 10]: Այդ պատճառով թույլ տեսնող երեխաների գրավոր աշխատանքներում մենք առաջին հերթին վերլուծեցինք տառերի և վանկերի հնչյունահնչութային փոխարինումների և տեղաշարժերի բնույթը:

Անցկացված հաստատող փորձարկումների արդյունքները ցույց տվեցին, որ թույլ տեսնող երեխաների գրավոր խոսքում նորմալ տեսողությամբ երեխաների գրավորի համեմատությամբ) ավելի լայն տարածում ունեն հնչյունահնչութային սխալները: Այսպես, ըստ I-IV դասարանների թույլ տեսնող աշակերտների գրավոր աշխատանքների վերլուծության (արտագրություն, շարադրություն, թելադրություն, գրավոր՝ նկարի

շուրջ)՝ տառերի և վանկերի հնչյունահնչութային փոխարինումներն առկա են 45,3% հետազոտվողների աշխատանքներում. I դասարանցիների՝ 54,2 %-ը, II դասարանցիների՝ 50,2%-ը, III և IV դասարանցիների՝ համապատասխանաբար 40,6%-ը և 40,5%-ը (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1

ՀԵՏԱԶՈՏՎՈՂՆԵՐԻ ԳՐԱՎՈՐ ԽՈՍՔՈՒՄ ԹՈՒՅԼ ՏՎԱԾ ՀՆՉՅՈՒՆԱՀՆՉՈՒԹԱՅԻՆ ՍԽԱԼՆԵՐԻ ՔԱՆԱԿԸ

Դասարան	Փորձարկվողներ	Գրավոր աշխատանքների տեսակները														
		Արտագրություն			Թելադրություն			Գրավոր՝ նկարի շուրջ			Շարադրություն			Ընդամենը		
		n	Սխալներ		n	Սխալներ		n	Սխալներ		n	Սխալներ		n	Սխալներ	
			հետազ	%		հետազ	%		հետազ	%		հետազ	%		հետազ	%
1	Թույլ տեսնող	82	42	51,2	52	30	57,7	54	30	55,5	-	-	-	188	102	54,2
	Նորմալ տեսնող	73	17	23,3	41	16	39,0	50	9	18,0	-	-	-	164	42	25,6
2	Թույլ տեսնող	53	25	47,1	302	152	50,3	89	44	49,4	50	27	54,0	494	248	50,2
	Նորմալ տեսնող	50	8	16	170	39	22,9	74	15	20,3	46	9	19,5	340	71	20,9
3	Թույլ տեսնող	38	13	34,2	248	99	39,9	29	12	41,4	89	40	44,9	404	164	40,6
	Նորմալ տեսնող	35	8	22,8	160	50	31,2	32	11	34,4	65	16	24,6	292	85	29,1
4	Թույլ տեսնող	58	19	32,7	127	50	39,4	127	49	38,6	147	68	46,2	459	186	40,5
	Նորմալ տեսնող	49	11	22,4	110	37	33,6	102	18	17,6	120	34	28,3	381	100	26,2
Ընդամենը	Թույլ տեսնող	231	99	42,8	72.9	331	45,4	299	135	45,1	286	135	47,21	545	700	45,3
	Նորմալ տեսնող	207	44	21,2	481	142	29,5	258	53	20,5	231	59	25,5	1177	298	25,3

Աղյուսակից երևում է, որ ուսումնասիրվող տարիքների թույլ տեսնող դպրոցականներն ավելի շատ հնչյունահնչութային սխալներ թույլ են տալիս շարադրություններում, թելադրություններում, ինչպես նաև նկարի շուրջ գրավոր աշխատանքներում և արտագրություններում՝ գրքից կամ գրատախտակից:

Այսպես, եթե II դասարանի հետազոտվողների կեսից ավելին (54%) շարադրություններում թույլ է տվել տառերի հնչյունահնչութային փոխարինումներ ու տեղաշարժեր, ապա արտագրության ժամանակ սխալները կազմել են 47,1%, իսկ III և IV դասարանների աշակերտների աշխատանքներում՝ դրանից էլ պակաս՝ 34,2% և 32,7%:

Թույլ տեսնող երեխաների համեմատությամբ հանրակրթական դպրոցի հետազոտվող աշակերտների բավականին քիչ թվով աշխատանքներում նկատվել են գրավորի սխալներ: Եթե I և II դասարանների թույլ տեսնող աշակերտների գրավոր աշխատանքներում դրանք կազմել են 54,2% և 50,2%, ապա նորմալ տեսողությամբ դպրոցականների աշխատանքներում՝ 20,9-ից–25,6%-ի սահմաններում: Մոտավորապես այդպիսի պատկեր էր նշվում նաև III-IV դասարանների աշակերտների գրավոր հանձնարարություններում:

Ներկայացված նկարում ակնառու է, որ հնչյունահնչութային սխալներ ամենից առավել ի հայտ են գալիս I-II դասարանների թույլ տեսնող



Նկար 1. Հետազոտվողների գրավորում հնչյունահնչութային սխալների առկայության համեմատական ցուցանիշները

դպրոցականների գրավոր աշխատանքներում, իսկ հետո, թեև IV դասարանում սխալները մի փոքր նվազում են, սակայն սխալների ցուցանիշները շարունակվում են մնալ բարձր:

Ուսումնասիրելով թույլ տեսնող երեխաների գրավոր աշխատանքներում տառերի ու վանկերի հնչյունահնչութային փոխարինումներն ու տեղաշարժերը՝ մենք չբացահայտեցինք գրավորի մեջ թողնված այդ տիպի սխալների պայմանավորվածությունը հետազոտվողների տեսողության վիճակով (նկար 2), քանզի դա պայմանավորված է բանավոր խոսքի խանգարումներով [1, 2, 8, 10]: Այսպիսով, ամենացածր (0,05-0,08 միավոր) տեսողությամբ աշակերտների խմբում հնչյունահնչույթային սխալների քանակն այնքան շատ չէր, որքան համեմատաբար ավելի լավ տեսողություն ունեցող երեխաների խմբում (0,09; 0,2 միավոր և բարձր): Օրինակ՝ 0,05-0,08 միավոր տեսողության սրությամբ I դասարանի աշակերտների խմբում տառերի և վանկերի հնչյունահնչութային փոխարինումներն ու տեղաշարժերը նկատվել են հետազոտվողների 37,2%-ի մեջ, իսկ 0,09-0,2 միավոր տեսողության սրությամբ երեխաների խմբում՝ աշակերտների 91%-ի մեջ: Այն դեպքում, երբ 0,2 միավորից բարձր տեսողության սրությամբ հետազոտվողների մեջ գրավորի այդ սխալները գտնվում էին նույն սահմանում՝ 37 %, այնպես, ինչպես եղել



Նկար 2. Հետազոտվողների տեսողության սրությամբ պայմանավորված գրավորի հնչյունահնչութային սխալների ցուցանիշները

է բավական ցածր տեսողության (0,05-0,08 միավոր) ժամանակ: Ցուցանիշների մոտավորապես նույն պատկերն է նշվել մյուս դասարանների թույլ տեսնող աշակերտների դեպքում (նկար 2):

Այսպիսով, ակնհայտ է, որ թույլ տեսնող դպրոցականների գրավոր աշխատանքներում տառերի և վանկերի հնչյունահնչութային փոխարինումներն ու տեղաշարժերը ուղղակիորեն պայմանավորված չեն տեսողության սրությամբ, այլ՝ հնչարտաբերական և հնչյունահնչութային լսողության խանգարումներով:

Մեզ նաև հետաքրքրում էր, թե ինչպիսին է սուլական և շչական հնչյունների՝ ս, զ, ց, ճ, ծ, ժ, շ, չ հարաբերակցությունը տառերի հնչյունահնչութային փոխարինումներում:

Թույլ տեսնող աշակերտների գրավոր աշխատանքների դիտարկումը վկայում է, որ հաճախ են նկատվում հետևյալ շփոթումները.

- չ-ց - ցիր-չիր, Խացիկ-Խաչիկ, պեցենի-պեչենի
- ս-շ -ասուն-աշուն, դաստ-դաշտ, սաքար-շաքար
- զ-ժ- զամ-ժամ, բազակ-բաժակ, ուղեղ-ուժեղ
- ճ-ծ - ծուտ-ճուտ, ծիպոտ-ճիպոտ, ծաս-ճաշ

Գրավոր աշխատանքների վերլուծությունը միաժամանակ ցույց տվեց, որ թույլ տեսնող երեխաների մեջ բավականին տարածված են ձայնեղ և խուլ բաղաձայնների փոխարինումները, հաճախ է հանդիպում ձայնեղ հնչյունների փոխարինումը խուլ հնչյուններով: Այսպես, տարրական դասարանների աշակերտներից շատերը գրում են կարտալ-կարդալ, տերեր-դերեր, այտպես-այդպես: Առկա էին նաև գրավոր խոսքի խանգարման այնպիսի տարբերակներ, երբ նույն երեխաների դեպքում նկատվում էին տառերի երկկողմանի փոխարինումներ: Այսպես, Արման Կ., Տիգրան Պ., Դավիթ Լ. և II դասարանի այլ աշակերտներ ադաթի փոխարեն գրում են ատաթ (գնալ-կնալ, թուր - դուր):

Որոշակի հնչյունով սկսվող բառեր ընտրելու առաջադրանքի կատարման ժամանակ անհրաժեշտ բառերի հետ մեկտեղ երեխաներն ընտրում էին նաև այնպիսիք, որոնք սկսվում էին հնչույթների նույն խմբին պատկանող այլ հնչյուններով: Օրինակ՝ I, II դասարանների մի քանի աշակերտներ (Նարինե Ի., Համբարձում Կ., Տիգրան Ա. և ուրիշները) բառեր էին հորինում հետևյալ կերպ.

- ժ հնչյունով՝ զամ (ժամ), զակետ (ժակետ), զամացույց (ժամացույց)
- զ հնչյունով՝ սանգ (զանգ), ուժել (ուզել)
- շ հնչյունով՝ սենք (շենք)
- ռ հնչյունով՝ Լիմա (Ռիմա), յեհան (ռեհան), Լուբեն (Ռուբեն):

Բացահայտվել է, որ հանձնարարված հնչյունով սկսվող առարկաների նկարներ ընտրելու առաջադրանքների կատարման ժամանակ հետազոտվողները թույլ էին տալիս հետևյալ բնորոշ սխալները.

1. ընտրում էին այլ հնչյունով սկսվող նկարներ, ինչը խոսում է հնչույթների անբավարար տարբերակման մասին: Այստեղ, ինչպես և գրավոր ժամանակ, սխալները վերաբերում են այն հնչյուններին, որոնք պատ-

կանում են ազգակցական խմբերին. ձայնեղները միախառնվում են խուլերով, սուլական հնչյունները՝ շչականներով (ռ-լ):

2. Գրելիս կատարված սխալները բացահայտեցին բառի մեջ հնչյունների շարքի հերթականության սահմանման անբավարար կողմնորոշումը, ինչը արտացոլվում է գրավորի և տառերի տեղափոխման վրա:

Բացի տառերի ու վանկերի տեղափոխումներից և տեղաշարժերից, խոսքի ընդհանուր թերզարգացումով թույլ տեսնող երեխաների մեջ հանդիպում են գրավորի այլ բազմապիսի այլ սխալներ, որոնք համընկնում են նորմալ խոսքով թույլ տեսնող երեխաների սխալներին: Ի դեպ, խոսքի ընդհանուր թերզարգացումով թույլ տեսնող երեխաների մեջ դրանք հանդիպում են ավելի հաճախ: Դրանցից առավել տարածվածները բացթողումները, տառերի ու վանկերի տեղափոխումներն են, ինչպես նաև ուղղագրական սխալները: Դրանք հայտնաբերվեցին I-IV դասարանների թույլ տեսնող երեխաների 82,9%-ի մեջ:

Տարրական դասարանների թույլ տեսնող աշակերտների գրավոր աշխատանքների հետագա վերլուծությունը ցույց տվեց, որ նրանք բավականին հաճախ են բաց թողնում վանկեր: Դրանք նկատվում են ինչպես բառի վերջում (նկար-նկարել, գրպան-գրպանիկ), այնպես էլ այն դեպքում, երբ բառի մեջ կրկնվում են նույն ձայնավոր հնչյունով վանկերը (պարադես-պարահանդես):

Բացահայտված է, որ տառերի և վանկերի բացթողումներն ու տեղափոխություններն ուղղակիորեն պայմանավորված են նաև գրավոր աշխատանքների տեսակներով:

Այսպիսով, թույլ տեսնող երեխաներն արտագրության, ինչպես նաև նկարի շուրջ գրավոր պատմություն հյուսելիս ընդհանուր առմամբ համեմատաբար ավելի քիչ սխալներ են թույլ տալիս, քան թելադրության և շարադրության ժամանակ (Աղյուսակ 2):

Աղյուսակից երևում է, որ արտագրության և նկարի շուրջ գրավոր պատմություն հյուսելու դեպքում I դասարանի փորձարկվող աշակերտների տառերի բացթողումներն ու տեղափոխությունները կազմում էին 82,9 և 88,9%, այն դեպքում, երբ թելադրության ժամանակ դրանք հասնում են 90,4%-ի:

Նկարից երևում է, որ տառերի ու վանկերի բացթողումներն առավել ի հայտ են գալիս I, II դասարանների թույլ տեսնող աշակերտների մեջ, հետագայում և հատկապես՝ IV դասարաններում, թեև դրանք մի փոքր նվազում են, սակայն շարունակում են մնալ բարձր՝ կազմելով 76,7%:

Անցկացրած հետազոտությունների արդյունքները վկայում են, որ տեսողության խանգարումներով երեխաների թույլ տված թվարկված սխալների հետ մեկտեղ արտահայտված է նաև խոսքի թերզարգացման ապաքերականացումը: Դա խոսքի թերզարգացում ունեցող երեխաների գրավոր խոսքի յուրատեսակ խանգարում է:

Մեր կողմից վերլուծված տարրական դասարանների թույլ տեսնող աշակերտների 510 գրավոր աշխատանքներում (231 արտագրություն

Աղյուսակ 2

Թույլ տեսնող փորձարկվողների գրավորում տեղ գտած բացթողումների, տառերի ու վանկերի տեղափոխությունների ցուցանիշները

Դասարան	Գրավոր աշխատանքների տեսակները														
	Արտագրություն			Թելադրություն			Գրավոր՝ նկարի շուրջ			Շարադրություն			Ընդամենը		
	n	Սխալներ		n	Սխալներ		n	Սխալներ		n	Սխալներ		n	Սխալներ	
		հետազ	%		հետազ	%		հետազ	%		հետազ	%		հետազ	%
	82	68	82,9	52	47	90,4	54	48	88,9	-	-	-	188	163	86,7
2	53	40	75,5	302	26,8	88,7	89	75	94,3	50	46	92	494	429	868
3	38	28	73,6	248	200	80,6	29	25	86,2	89	76	85,4	404	329	81,4
4	58	41	70,7	127	98	77,1	127	96	75,6	147	117	79,6	459	352	76,7
Ընդամենը	231	177	76,6	729	613	84,1	299	244	81,6	286	239	83,5	1541	1273	82,6



Դ ա ս ա ր ա ն ն ե ր

Արտագրություն Թելադրություն Գրավոր՝ նկարի շուրջ Շարադրություն

Նկար 3. Թույլ տեսնող աշակերտների գրավոր աշխատանքներում տառերի և վանկերի բացթողումների և տեղափոխությունների ցուցանիշները

և 299 գրավոր՝ նկարի շուրջ) բացահայտված է ՝ բառերի միասին և մեկ բառի տառերի անջատ գրության 212 (41,6 %) դեպք: Գրավորում հիշյալ սխալների այդքան լայն տարածված լինելու պատճառը ոչ թե քերականական կանոններին չտիրապետելն է, այլ թույլ տեսնող երեխաների խոսքի զարգացման անբավարար մակարդակը:

Վերլուծելով տարրական դասարանների թույլ տեսնող աշակերտների գրավոր աշխատանքները՝ մենք առանձին խմբերի դասեցինք անուշադրությամբ պայմանավորված սխալները՝ տառերի, վանկերի կամ բառերի կրկնություն, նախադասության մեջ բառերի բացթողումներ և այլն: Մենք հայտնաբերել ենք ընդհանուր առմամբ 531 (31,6 %) այդպիսի սխալներ, ընդ որում՝ դրանք առկա էին թույլ տեսնող աշակերտների գրած թելադրություններում (44,0 %), արտագրություններում (40,7 %), նկարի շուրջ հյուսած գրավոր աշխատանքներում (26,2 %): Անուշադրությամբ պայմանավորված սխալներն առավել բնորոշ են I, II դասարանների աշակերտներին (28,1 % և 57,8 %), և ոչ III, IV դասարանների աշակերտներին (25,2 % և 18,7 %):

Թույլ տեսնող I դասարանցիների բառապաշարը սահմանափակվում է հիմնականում այնպիսի առարկաների անվանումների իմացությամբ, որոնք հանդիպում են կենցաղում, առօրյա կյանքում: Օրինակ՝ գյուղական բնակավայրերի երեխաները լավ գիտեին տնտեսական գույքի, գյուղատնտեսական աշխատանքների տեսակների, ընտանի կենդանիների անունները, իսկ առօրյա կյանքի սահմաններից դուրս գտնվող բառերը գիտեին ոչ հաստատապես: Գրավոր խոսքի խանգարումներ ունեցող թույլ տեսնող երեխաները մեծ դժվարություններ են կրում օժանդակ բառերի յուրացման և գործածման հարցում:

Թույլ տեսնող երեխաների բառապաշարը հարստանում և հստակեցվում է նրանց տարիքային զարգացման և զգայական փորձի ընդլայնման, ուսուցման, լսողական ընկալման, հնչյունային վերլուծության կանոնավորմանը համապատասխան: Այնուամենայնիվ, մի շարք հեղինակների տվյալներով, նույնիսկ III, IV դասարանների թույլ տեսնող աշակերտների մեջ առկա են բառապաշարի զարգացման անգամ լուրջ թերություններ:

Այսպիսով, թույլ տեսնող կրտսեր դպրոցականների գրավոր աշխատանքների վերլուծության արդյունքները վկայում են, որ գրելու ընթացքում առկա բազմաթիվ սխալներ մեծ մասամբ սովորողների խոսքի ընդհանուր թերզարգացման, ինչպես նաև խոսքի բառաքերականական կառույցի անբավարար ձևավորման հետևանք են:

Սահմանափակ բառապաշարը, խոսքի իմաստային կողմի անբավարար ձևավորվածությունը, բառի վերաբերյալ հստակ հնչյունային պատկերացումների բացակայությունը, բառերի տարբերակների ընտրության փոքր հնարավորությունը երեխային դնում են անհաղթահարելի կացության մեջ՝ դրանով իսկ դժվարեցնելով ուղղագրության կանոնների յուրացումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն /գիտամեթոդական հոդվածների ժողովածու Ռ.Ն. Ազարյանի խմբագրությամբ /Եր., 2004, 163 էջ:

2. Հատուկ մանկավարժության բառարան /Ռ.Ն. Ազարյանի և Վ.Գ. Խալաթյանի խմբագրությամբ/ Եր., 2001, 300 էջ:

3. Մկրտչյան Հ.Ռ., Տարրական դասարաններում սովորող թույլ տեսնող երեխաների գրավոր խոսքի խանգարումների շտկմանը նպատակաուղղված հատուկ հանձնարարությունների, խաղերի և թելադրությունների կիրառման արդյունավետության պայմանները /Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն գիտամեթոդական հոդվածների ժողովածուում Ռ.Ն. Ազարյանի խմբագրությամբ/ Եր., 2004, էջ 40- 45:

4. Ազարյան Ռ.Ն., Սարգսյան Զ.Վ., Ինչպես պահպանել և լավացնել երեխայի տեսողությունը/ Եր., 1994, 55 էջ:

5. Պետրոսյան Ռ.Ժ., Ֆիզիկական կուլտուրան և աչքի հատուկ վարժությունները որպես տեսողության խախտման նախազգուշացման և տեսողական հոգնածության վերացման միջոց /Հատուկ մանկավարժություն և հոգեբանություն գիտամեթոդական հոդվածների ժողովածուում:

6. Бондаренко А. И. Пути преодоления нарушений письма в процессе обучения родному языку: Автореф. дис. … канд. пед. наук. – М., 1980.– 17 с.

7. Выготский Л. С. Основы дефектологии. Санкт-Петербург. -М.,2003.-654 с

8. Ермаков В. П., Якунин Г. А. Основы тифлопедагогики: Развитие, обучение и воспитание детей с нарушением зрения: Учебное пособие для студентов высших учебных заведений. – М., 2000. – С. 123-130; 154-171.

9. Спирова Л. Ф. Графические ошибки при нарушении письма у детей с недоразвитием речи. “Проблемы психического развития аномального ребенка”. М.,”Просвещение”, 1966. С. 87-94.

10. Эльконин Д. Б. Развитие устной и письменной речи учащихся. // Хрестоматия по возрастной и педагогической психологии. – Под ред. И. И. Илясовой, В. Я. Ляудис. – М., 1980. – С. 254-265..Ն. Ազարյանի խմբագրությամբ/ Եր., 2002, էջ 44 – 47:

РЕЗЮМЕ

ХАРАКТЕРИСТИКА НАРУШЕНИЙ ПИСЬМА У СЛАБОВИДЯЩИХ МЛАДШИХ ШКОЛЬНИКОВ

А.Р. Мкртчян

директор ''Детского дома имени Мари Измирлян',
кандидат педагогических наук, доцент

В статье представлены результаты нарушений письма у слабовидящих младших школьников при списывании, в диктанте, описании картинок, сочинении.

SUMMARY

THE CHARACTERISTIC OF DISORDERS OF THE LETTER AT VISUALLY IMPAIRED YOUNGER SCHOOL STUDENTS

A. R. Mkrtchyan

Associate professor, Candidate of Pedagogical Sciences,
Director of ''Orphanage after Mari Izmirlyan''

Article is devoted to the analysis of disorders of the letter at visually impaired younger school students at writing off, in a dictation, the description of pictures, the composition.